ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

---

N 01-30
«03» ԱՊՐԻԼԻ 2012թ

ՀԵՌ.(093) 32-59-62
ТЕЛ.(093) 32-59-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի մարտ ամսվա ընթացքում ընդունած որոշումները և հայտնում ենք, որ սույն ամսվա ընթացքում արձակած կարգադրություններ չկան:

Առդիր 2 թերթ:

Համայնքի ղեկավար Մ. Բաբայան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 3047-12
«03» 04 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1-Ա

---

«6» ՄԱՐՏԻ 2012թ. գ. ԱՄԲԵՐԴ

## ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին Ամբերդ համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել՝
    1) Կոմիտասի 14 հասցեում գտնվող Ամբերդի մշակույթի տունը, , տարածքի տիրապետող նշանակել՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Սամվել Ռուբիկի Սարգսյանին
2. Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարածքի տիրապետողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ. Բաբայան

Կ.Տ 2012 թվականի մարտի «06»

գ. Ամբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2-Ա

«6» ՄԱՐՏԻ 2012թ. գ. ԱՄԲԵՐԴ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառներ փակցնելու համար Ամբերդ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝
   1) Կոմիտասի 21 հասցեում 4 քմ.
   2) Կոմիտասի 16 հասցեում 3 քմ.
2. Սույն որոշման օրինակն ուղարկել Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Բաբայան

Կ.Տ.

2012 թվականի մարտի «6»

գ. Ամբերդ